ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ. Ախուրյան, (0312) 70885 , 091 420 451 lusinmat001@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

18 փետրվարի 2022 թվականի թիվ 22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ /ԲՆԱԿԱՎԱՅՐ ԱԽՈՒՐՅԱՆ/ ԱՎԵՏԻՔ ՊԱՎԼՈՒՆԻԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ,ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդված 1-ին մասի 21-րդ կետի դրույթով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 34-րդ և 39-րդ կետերի դրույթներով և հաշվի առնելով, որ ինքնակամ շինությունն իրականացրած քաղաքացի Ավետիք Հարությունյանը, իր դիմումի համաձայն, ընդունել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օրինական ճանաչված և համայնքի սեփականությունը համարված 199.9 քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը, 31.49 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակը, 41.05 քառակուսի մետր անասնաշենքը, 1.06 քառակուսի մետր աստիճանահարթակը՝ ընդամենը՝ 273.5 քառակուսի մետր, և նրանց պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-007-0980-0048 կադաստրային ծածկագրով 0.09899 հեկտար մակերեսով հողամասի (վկայական 31012022-08-0007 անշարժ գույքի հասցեն՝Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Ախուրյան, Սելենգիոն կայան թաղամաս, 66 բնակելի տուն) ուղղակի վաճառքով գնման նախապատվության իրավունքը՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է.

1.Համայնքի ղեկավարի առաջարկությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը համարվող , օրինական ճանաչված 199.9 քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը, 31.49 քառակուսի մետր ավտոտնակը, 41.05 քառակուսի մետր մակերեսով անասնաշենքը, 1.06 քառակուսի մետր աստիճանահարթակը և նրանց պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-007-0980-0048 կադաստրային ծակագրով 0.09899 հեկտար մակերեսով հողամասը (վկայական 31012022-08-0007 անշարժ գույքի հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Ախուրյան, Սելեկցիոն կայան թաղամաս, 66 բնակելի տուն, գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով 2 112 952 (երկու միլիոն մեկ հարյուր տասներկու հազար ինը հարյուր հիսուներկու) դրամ ընդհանուր արժեքով, որից՝ 904284/ ինը հարյուր չորս հազար երկու հարյուր ութսունչորս/ դրամը՝ շինության արժեք, 1208668/ մեկ միլիոն երկու հարյուր ութ հազար վեց հարյուր վաթսունութ / դրամը՝ հողամասի արժեք, օտարել կառուցապատողին, քաղաքացի՝Ավետիք Պավլունիի Հարությունյանին (անձնագիր՝ AP 0506686 բնակության հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, ք. Գյումրի, տնակ 159/336):

2.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավար՝ Արծրունի Իգիթյանին.

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացու հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր և ապահովել սույն որոշումից բխող իրավունքների պետական գրանցումը՝ քաղաքացու միջոցներով:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -25	Դեմ -0	Ձեռնպահ -2
Ա. ԱՅՎԱԶՅԱՆ		Մ. ՄՆԱՑՅԱՆ
Ֆ. ԱՆՏՈՆՅԱՆ		Ն. ՄՈՒՇԵՂՅԱՆ
Մ. ԱՌԱՔԵԼՅԱՆ		
Կ. ԱՐՇԱԿՅԱՆ		
Վ. ԱՐՇԱԿՅԱՆ		
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ		

Ա. ԴՐՄԵՅԱՆ

Շ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Կ. ԷԼԲԱԿՅԱՆ

Ա. ԻԳԻԹՅԱՆ

Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Լ. ՂԱԶԱՐՅԱՆ

Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Մ. ՄԱԹՈՍՅԱՆ

Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

Գ. ՄԿՐՏՉՅԱՆ

Հ. ՆԱՎՈՅԱՆ

Կ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Հ. ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. ՍԵՐԳՈՅԱՆ

Թ. ՍՈՒՎԱՐՅԱՆ

Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

18 փետրվարի 2022թվական
գյուղ Ախուրյան